ՀԱՄԱՍԼԱՎՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ Հ. Ի.

Համասլավոնական գաղափարները Ռուսաստանում բուռն վերելք են ապրել Ղրիմի (Արևելյան) պատերազմի սկզբում: Համասլավոնականությունը՝ որպես շարժում և գաղափարախոսություն ձևավորվել է Արևելյան Եվրոպայում XVII դարավերջին, իսկ հետագայում մուտք է գործել Ռուսաստան: «Համասլավոնականություն» եզրույթն առաջին անգամ շրջանառության մեջ դրել է ազգությամբ չեխ գրող Յան Հերկելը 1826 թ.[1]: Սլավոններին միավորելու գաղափարն Արևելյան Եվրոպայում արագորեն լայն տարածում գտավ: Դա պայմանավորված էր սլավոնների էթնիկ, լեզվական ու ազգակցական կապերով, սլավոնական ընդհանրություններով և համերաշխությամբ: Պատմության արմատները հասնում են մինչև XVI դ., երբ ի հայտ եկան սլավոնների հզորության մասին առաջին ստեղծագործությունները[2]: Գեղարվեստական գրականության մեջ առաջին անգամ համասլավոնական գաղափարախոսությունն արծարծվեց սլովակ գրող Յան Կոլլերի "ԺՏփՖ բսՈՉօ" (1824 թ.) պոեմում, այնուհետև այն թափանցեց նաև գիտության ոլորտ[3]: Մինչ օրս հրատարակվել են բազմաթիվ աշխատություններ ինչպես մինչխորհրդային[4], խորհրդային[5], այնպես էլ հետխորհրդային[6] շրջանում: Համսլավոնականությունը մշտապես ունեցել է

---

[1] **Григорьева А. А.** *Панславизм: идеология и политика (40-е годы XIX- начало XX вв.), автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Иркутск, 2010, с. 1.*

[2] **Лещиловская И. И.** *Концепции славянской общности в XVIII-XIX вв. (Вопросы истории, 1976, N 12, с. 76).*

[3] **Фрейдзон В. И.** *Представления и идеи славянской общности в первой половине XIX века (Вопросы истории, 1979, N 9, с. 63).*

[4] **Фадеев Р. А.** *Собрание сочинений. Наш военный вопрос. Восточный вопрос, т. II, ч. 2. Мнение о восточном вопросе, СПб., 1889;* **Кареев Н.** *История западной Европы в новое время (Развитие культурных и социальных отношений), т. 5, СПб., 1898;* **Пыпин А. Н.** *Панславизм в прошлом и настоящем (1878). Предисловие и примечания В. В. Водовозова, СПб.,1913.*

[5] **Волков В. К.** *К вопросу о происхождении терминов "пангерманизм" и "панславизм". Славяно-германские культурные связи и отношения. Статьи и сообщения (ответст. ред. Королюк В. Д.), М., 1969);* **Мыльников А. С.** *Рост общественного и научного интереса к зарубежным славянам в конце XVIII-начале XIX вв. (Славяноведение в дореволюционной России. Изучение южных и западных славян), М., 1988.*

[6] *Славянское движение XIX-XX веков: съезды, конгрессы, совещания, манифесты, обращения, отв. ред. Досталь, М., 1998.*

քաղաքական ենթատեքստ և իր բոլոր դրսևորումներով սպասարկել է պետական որոշակի շահերի: Խորհրդային իշխանությունն իր գոյության առաջին տարիներին, ելնելով համաշխարհային քաղաքական զարգացումներից, հրապարակավ հանդես եկավ այդ գաղափարախոսության քննադատությամբ: 1927 թ. հունիսի 27-29-ին Վարշավայում տեղի ունեցավ Արևելյան Եվրոպայի սլավոնական աշխարհի պատմաբանների գիտաժողով: Հունիսի 26-ին ՀամԿ(բ)Կ կենտկոմի պաշտոնաթերթ «Պրավդան» տպագրեց հայտնի բոլշևիկ, պատմաբան Մ. Պոկրովսկու «Համասլավոնականությունը իմպերիալիզմի ծառա» հոդվածը, որտեղ հեղինակը խստորեն քննադատում էր գիտաժողովի կազմակերպումը՝ նշելով, որ «Արևմուտքը նպատակ ունի Խորհրդային Ռուսաստանի հարևանությամբ ստեղծել գաղափարական հզոր հենարան», իսկ համասլավոնականությունը միշտ եղել է «...քաղաքական զենք տարբեր գործիչների ձեռքում»[7]:

Արևելյան Եվրոպայում համասլավոնականությունն իր գագաթնակետին հասավ 1848 թ., որն, անշուշտ, առաջին հերթին կապված էր այդ շրջանում բռնկված հեղափոխությունների հետ: 1840-ական թվականներին Եվրոպայում համասլավոնականությունը ներկայանում էր որպես նոր վտանգ, որն սպառնում էր արևմտյան քաղաքակրթությանը[8]: Տնտեսական առումով սլավոնական ժողովուրդները հետ էին մնում ռոմանագերմանական ժողովուրդներից, քանզի բավական երկար ժամանակ օտար նվաճողների տիրապետության տակ էին գտնվում: Այդ ժամանակաշրջանում միայն ռուսներն էին, որ որևէ օտար տիրապետության տակ չէին գտնվում, այլ իրենց սահմաններն էին ընդլայնում Եվրոպայում և Ասիայում:

Արևելյան Եվրոպայում վերոնշյալ գաղափարախոսության ծագումն առաջին հերթին կապված էր օտար տիրապետության տակ գտնվող սլավոնական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի վերելքով: Անհրաժեշտ է նշել, որ սկզբնական փուլում սլավոնական համերաշխության գաղափարը դրվում էր էթնոլեզվական ազգակցության հիմքի վրա: Համասլավոնականության գաղափարախոսները, լինելով քրիստոնեական տարբեր՝ ուղղափառ, կաթոլիկ, բողոքական եկեղեցիների դավանողներ՝ միաբանվել էին մեկ ընդհանուր գաղափարի շուրջ, այն է՝ համախմբել սլավոնական բոլոր ժողովուրդներին: Պրուսիայի գլխավորությամբ Գերմանիայի, իսկ սարդինական թագավորության գլխավորությամբ Իտալիայի միավորման գործընթացները միս ու արյուն տվեցին նաև համասլավոնականության գաղափարախոսությանը:

Ռուսաստանում այդ գաղափարների առաջին տարածողը ազգությամբ խորվաթ, աստվածաբան, գրող Յուրի Կրիժանիչն էր, որը ցար Ալեքսեյ Ռոմանովին ներկայացրեց համասլավոնականության իր ծրագրերը: Սակայն դրանք ընդունելություն չգտան Ռուսաստանում[9]: Ըստ պատմաբան Ա.

---

[7] *Правда, 26.VI.1927.*

[8] **Кареев Н.,** *նշվ. աշխ., էջ 407:*

[9] **Пыпин А. Н.,** *նշվ. աշխ., էջ 74:*

Պիպինի, Ռուսաստանում հարավ-սլավոնների նկատմամբ հետաքրքրությունը մեծացավ հատկապես XVII դ. երկրորդ քառորդին, ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, երբ սլավոնական ժողովուրդներն ուշի-ուշով հետևում էին հզորացող Ռուսաստանին, որը կարող էր օգնության ձեռք մեկնել ազգակից եղբայրներին[10]: Ռուսաց հասարակական, քաղաքական, և գիտական շրջաններում սլավոնագիտության նկատմամբ հետաքրքրությունն էլ ավելի մեծացավ XIX դ. սկզբին՝ պայմանավորված Բալկաններում Ռուսաստանի հեռահար նպատակներով[11]: Սլավոնագիտության նկատմամբ ուշադրությունը ժամանակի ընթացքում վերածվեց համասլավոնականության գաղափարախոսության: Սկզբնական շրջանում այն ազդեցիկ դեր ուներ կառավարող ազնվականական վերնախավի մեջ, այնուհետև թափանցեց հասա- բակության մյուս շերտերը[12]: XIX դ. 30-ական թվականներին Ռուսաստանում «պաշտոնական ժողովրդայնության» տեսաբաններից Մ. Պոգոդինը փորձում էր սլավոնների ազատագրական պայքարը ներկայացնել ռուսական պետության շահերին համապատասխան, որը, սակայն, իշխող վերնախավի կողմից հավանության չարժանացավ[13]: Պետական կառավարող համակարգի շահագրգռությունն արտահայտվեց նրանով, որ ռուսական համալսարաններում մեկը մյուսի հետևից սկսեցին բացվել սլավոնագիտական ամբիոններ[14]:

Համասլավոնականությունը Նիկոլայ Առաջինի վարչակարգի համար բավական ձեռնտու գաղափարաքաղաքական հոսանք էր, որով ցարը կհիմնավորեր թե՛ երկրի ներսում, թե՛ սահմաններից դուրս ձեռնարկած քաղաքական քայլերն ու նվաճումները: Եթե այդ գաղափարախոսությունը Եվրոպայում ծառայում էր որպես սլավոնների ինքնությունը վերականգնելու միջոց, ապա ռուսաց հասարակությունը երկփեղկված էր: Հասարակական-քաղաքական շրջանները և ստեղծագործող մտավորականությունն իրենց համակրանքն էին հայտնում սլավոն և ուղղափառ դավանանքի քրիստոնյաներին: Պետական կառավարող համակարգը ցանկանում էր ռուսական կայսրության առաջատարությամբ միավորել սլավոններին: Նշված գաղափարախոսությունում մեծ տեղ էր հատկացվում ոչ միայն սլավոնների նկատմամբ կարեկցանքին, այլև նրանց ծագումնաբանությանը և նույն դավանանքը ունենալու խնդրին: Սլավոն ժողովուրդների մեջ կային կաթոլիկ դավանանքի հետևորդներ, որոնք հակված էին դեպի գերմանական

---

[10] Նույն տեղում, էջ 75:

[11] Տե՛ս Мыльников А. С., նշվ. աշխ., էջ 28-39:

[12] Волков В. К., նշվ. աշխ., էջ 30:

[13] Նույն տեղում, էջ 49:

[14] Грот К. К. *Истории славянского самосознания и славянских сочувствий в русском обществе (из 40-х годов XIX столетия) (отдельный оттиск из N 195, 196, 197 и 198 Правит. Вестника), с. 4;* Мыльников А. С. *Центры славянских изучений в первой трети XIX в. и их деятельность (Славяноведение в дореволюционной России. Изучение южных и западных славян, М., 1988. с. 51).*

պետությունները: Մասնավորապես, լեհ ժողովրդի փորձը արդեն մեծ դաս էր չեխերի և սլովակների համար:

Յարական վարչակարգի համար հիմնական թիրախը բալկանյան ժողովուրդներն էին: Մինչև համասլավոնականների առաջին համագումարը 1848 թ. հունվարից մայիս ընկած ժամանակահատվածում Կ. Պոլսի ռուսական դեսպանությունից երեք զեկույց է ուղարկվում Պետերբուրգ՝ «Արևելքում ուղղափառության մասին» վերնագրով: Ուղղափառության դերն ու նշանակությունը մեծացնելու նպատակով առաջարկվում է 11 կետից բաղկացած գործողությունների մի ծրագիր: Ըստ զեկուցագրի, հրամայական էր կրթական ծրագրի կարևորումը՝ ընդհուպ սերբերենի ու բուլղարերենի ամբիոնների հիմնումը: Առաջնահերթ էր համարվում Կիևի և Օդեսայի հոգևոր ակադեմիաներում հույների և սլավոնների ընդունելության կարգի պարզեցումը: Պետք էր հատուկ ուշադրություն դարձնել Արևելյան նվիրա-պետությունների պատմության դասավանդմանը[15]:

Փաստորեն, դեռ 1848 թ., երբ Եվրոպայում մոլեգնում էր հեղա-փոխությունների նոր ալիքը, որն Արևելյան Եվրոպայի ժողովուրդների կող-մից դիտարկվում էր որպես ազգային-ազատագրական պայքար, միաժամանակ, Պրահայում տեղի էր ունենում համասլավոնականների առաջին համագումարը: Ռուսաստանը չէր ցանկանում առիթը բաց թողնել իր հովանու ներքո ստեղծելու սլավոններով միավորված մի մեծ պետություն՝ Կ. Պոլիս կենտրոնով:

Սակայն հարց է առաջանում. ռուսներն արդյոք կհրաժարվե՞ն իրենց մայրաքաղաքներից, և կենտրոնը կտեղափոխեին Կ. Պոլիս: Ռուսական դեսպանատան մայիսի 4-ի զեկույցում հեղինակը, խոսելով Կ. Պոլսի մասին, ասում է, որ այս քաղաքը (Յարգրադը), որը միշտ եղել է իրենց երազանքը, պետք է յուրացվի նվաճելուց հետո: Այլապես Ռուսաստանը կունենա տարբեր հարավ և հյուսիս, որոնք միմյանց նկատմամբ թշնամաբար կտրամադրվեն: Դա հաղթահարել կլինի միայն ուղղափառության միջոցով, քանզի այն ավելի ուժեղ է, քան կաթոլիկությունն ու բողոքականությունը՝ միասին վերցրած[16]: Այս նույն մտքին հակված էր նաև սլավոնաֆիլ Ա. Խոմյակովը[17]: Սլավոնաֆիլներն իրենց հիմնադրույթներում, ելնելով ժողովրդայնության տեսությունից, մեծ տեղ էին հատկացնում ուղղափառությանը: Նրանք ոգևորված էին թուրքական տիրապետության տակ գտնվող ուղղափառներին ազատագրելու գաղափարով: Միևնույն ժամանակ, 1852-1853 թթ. Թուրքիայում դիվանագիտական առաքելությամբ գտնվող Միխայիլ Վոլկովը տեղի ուղղափառ եպիսկոպոսների հետ ունեցած զրույցի մասին հայտնում է Ռուսաստանի արտաքին գործերի ապագա նախարար Ա. Գորչակովին.

---

[15] *О православии на Востоке. Три записки, составленные в 1848 году (Русский архив, 1878, N 1, с. 120).*

[16] *Նույն տեղում, էջ 123:*

[17] **Линицкий П.** *Славянофильство и либерализм. Опыт систематического обозрения того и другого, Киев, 1882, с. 32-34.*

եպիսկոպոսներն իրենց մտահոգությունն էին հայտնել՝ ասելով. «Այդ ... Նիկոլայը, որն այժմ այդքան նախանձախնդիր է ուղղափառության բարօրության համար, անցած 1852 թվականին վրացական եկեղեցուն զրկեց իր ինքնուրույնությունից: ... Դուք դա կանեք նաև մեզ հետ: Մենք այժմ հարուստ ենք և ուժեղ: Բնը միլիոն շունչ պատրիարքի, նրա սինոդի և յոթանասուն թեմական եպիսկոպոսների ձեռքում է: Դուք խնամակալի իրավունքով մեզ կզրկեք ամեն ինչից, կվերացնեք մեր նշանակությունը և մուրացկան կդարձնեք»[18]: 1852 թ. ռուսական իշխանությունները վրաց ուղղափառ եկեղեցու գույքը հանձնեցին պետական գանձարանին: Միայն խոշոր եկեղեցիները և մենաստանները պահպանեցին իրենց հողերը: Հունական եկեղեցու ներկայացուցիչները մտահոգ էին, որ ապագայում իրենք ևս կզրկվեն սեփականությունից:

Նույն մտահոգությունն ունեին նաև սերբերը: Նրանք շատ լավ հասկանում էին, որ Ռուսաստանի կողմից իրենց սիրաշահելը սերտորեն կապված է զավթողական նկրտումների և Արևմուտքում դիրքերն ամրապնդելու քաղաքականության հետ: Եվ անգամ 1853 թ. նրանք վախենում էին Ռուսաստանի գավառ դառնալու գաղափարից: Անհայտ մի սերբի՝ Պետերբուրգ գրած նամակից պարզվում է, որ ռուսների՝ իրենց ներքին գործերին միջամտելու քաղաքականությունը իր հայրենակիցներին ամենևին դուր չէր գալիս և մտահոգության տեղիք էր տալիս: Չուրանալով ռուսների ունեցած ներդրումը սերբերի՝ ինքնավարություն ձեռք բերելու գործում՝ նամակի հեղինակը, այնուամենայնիվ, իր դժգոհությունն է հայտնում. «Ասե՛ք, խնդրեմ, արդյոք մե՞նք ենք մեղավոր, որ անկախ մեր կամքից, ցանկությունից, մեզ ստիպում եք հեռանալ ձեզանից ու միություն փնտրել նրանց հետ, որոնց ատում ենք: Անհրաժեշտությունը բարի կամք չէ: Արևմուտքի հետ, որի հետ մեզ հաճախ անարդարացիորեն համեմատում են, մենք ոչ մի ընդհանուր բան չունենք: Մենք նրանցից տարբերվում ենք և՛ծագումով, և՛ բնույթով, և՛ լեզվով, և՛ բարքերով, մեր հավատով, խիստ տարբերվում ենք անգամ մեր ուղղությունով, իսկ ձեզ հետ՝ հակառակը, մեր հարազատությունն ամենուր է երևում, մեր ցանկությունն է միավորվել ձեզ հետ՝ որպես սլավոնության կենտրոնի, ուղղափառության սրբազան խորանի և մեզ համար լուսավորության անկեղծ աղբյուրի: Հնարավոր է՝ քաղաքական շահերը մեզ ինչ-որ տեղ բաժանում են միմյանցից, և մենք մեզ, որպես Ռուսաստանի գավառ, չենք ուզում տեսնել: Սակայն, եթե դուք չունեք նման նկրտումներ, ապա միայն մեկ անգամ պետք է անկեղծորեն ասել, որ չեք ցանկանում տիրանալ մեր երկրամասին, և նման եղբայրական անկեղծությունը վերջ կդներ մեր անվստահությանը»[19]:

Ռուսական կառավարությունը Բուլղարիայում, Սերբիայում, Չեռնոգորիայում, անգամ Ավստրիայում գտնվող սլավոնական տիրույթներում

---

[18] **Тарле Е. В.** *Крымская война, т. 1, М., 1950, с. 156.*

[19] *Россия и Сербия в конце Николаевского царствования (1853). Письмо неизвестного серба в Петербург из Парижа (Русский архив, 1878, N 3, с. 367).*

ուներ գործակալներ, որոնք ամենուր լուրեր էին տարածում, թե եկել է Թուրքիայի վերջը, և ռուսական կայսեր մեկ խոսքը բավական է, որ այդ վերջը լինի: Ռուսաստանը միլիոնանոց զորքով և հսկայական նավատորմով պատրաստ է ոչնչացնել Բարձր Դուռը և դրա ավերակների վրա կառուցել նոր՝ քրիստոնեական պետություն: Թուրքական կայսրության շատ շրջաններում՝ բնակեցված հունական դավանանքի ժողովուրդներով, դժգոհություններ առաջացան: Կ. Պոլսում օսմանյան կառավարության ձեռքն ընկան ռուսական գործակալներ: Ռուսաստանում հայտնվեցին ձեռագիր հոդվածներ՝ գրված իշխանամետ հեղինակների կողմից, որտեղ նրանք հնարավոր էին համարում սլավոնական ցեղերի միավորումը Ռուսաստանի հետ և խոսում էին ցեղակից կայսրության կազմի մեջ մտնելու՝ նրանց պատրաստակամության մասին: Ոչ ոք չէր կասկածում, որ այդ հոդվածները գրվել են կառավարության համաձայնությամբ, առավել ևս, որ նույն մտքերը, սակայն շատ մեծ զգուշավորությամբ, արտահայտում էին կառավարական տպագիր մարմինները[20]:

Անգամ Ռուսաստանն իր արտաքին քաղաքականությունը Արևելյան հարցի համատեքստում կառուցելիս, առաջնորդվելով միայն սեփական շահերով, բացահայտորեն անտեսում էր այն ժողովուրդների ճակատագիրը, որոնք հայտնվելու էին Եվրոպայի հզորագույն երկրների միջև առաջացած հակամարտության թիրախում: Այսպես, երբ 1853 թ. մայիսի 6-ին ռուս-թուրքական բանակցություններն ընդհատվեցին, Նիկոլայ Առաջինը փորձեց իրականացնել բանակցությունների ընթացքում ի հայտ եկած պլանները, որոնց մեջ էր նաև 1853 թ. հունվարին Կ. Պոլիս դեսանտ իջեցնելը[21]: Սակայն նա այս պլանից հրաժարվեց: Կայսրին ավելի շատ դուր էր եկել 1853 թ. մարտի 24-ին իշխան Ի. Պասկևիչի գրած զեկույցը[22], որտեղ վերջինս առաջարկում էր գրավել Վառնան և Բուրգասը, զորքերը մտցնել Մոլդովայի և Վալախիայի իշխանություններ[23]: Պասկևիչը, խոսելով այն «զրկանքների» մասին, որոնք քրիստոնյաները կրում են պատերազմներից հետո[24], այնուամենայնիվ, հետևյալ միտքն է առաջ քաշում. «գրավել իշխանությունները (Մոլդովան և Վալախիան – Գ. Հ.) և հայտարարել, որ դրանք չեն մաքրվի այնքան ժամանակ, քանի դեռ թուրքերն իրենց պարտավորվածությունները չեն կատարել»[25]: Խոսքը 1829 թ. Ադրիանուպոլսի պայմանագրով ստանձնած պարտավորությունների մասին է: Սակայն արդյո՞ք Պասկևիչը չէր հասկացել, որ, միևնույն է ռուսական զորքերի դուրս

---

[20] **Басаргин Н. В.** *Воспоминания, рассказы, статьи, Иркутск, 1988, с. 244.*

[21] **Никитин С. А.** *Очерки по истории южных славян и русско-балканских связей в 50-70-е годы XIX в., М., 1970, с. 115.*

[22] *Նույն տեղում, էջ 116:*

[23] *Войны России с Турцией 1828-1829 и 1853-1854 (Русская старина, 1876, N 8, с. 681).*

[24] *Նույն տեղում, էջ 685:*

[25] *Նույն տեղում, էջ 682:*

գալուց հետո տեղի քրիստոնյա ժողովուրդը պետք է ենթարկվեր նույն «զրկանքներին», որոնց միշտ արժանացել էր: Պարզապես, ըստ Պասկևիչի, այս քայլով երեք-չորս տարվա ընթացքում կկարողանային առանց պատերազմ հայտարարելու «նվաճել Եվրոպական Թուրքիան»[26]: Փաստորեն, սա ևս մեկ ապացույց է, որ համասլավոնականության գաղափարախոսությունը պարզապես լավ հենարան էր ռուսական պետության համար՝ իրագործելու իր նվաճողական քաղաքականությունը:

Իսկ արդյո՞ք բալկանյան ժողովուրդներն ու ուղղափառներն իրավունք ունեին վերապահումով մոտենալու Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը: Մեր կարծիքով, այո՛, քանի որ ռուսական հասարակությունն առաջնային էր համարում իր պետության շահերը: Դրա ապացույցը 1853 թ. դեկտեմբերի 7-ին պատմաբան Մ. Պոգոդինի՝ կոմսուհի Ա. Բլուդովային գրած նամակն է: Մ. Պոգոդինը, խոսելով սլավոն եղբայրների, ուղղափառների ազատագրության մասին, լեհերի ու հունգարների առնչությամբ նշում է, որ նրանց պետք վախեցնել և ուժ ցույց տալ[27]: Արդյո՞ք հետագայում նույն ճակատագրին չէին արժանանա «սլավոն եղբայրները» ևս, երբ փորձեին առաջ քաշել իրենց ազգային շահերը: Եղբայր սլավոններին ազատագրելը միայն քող էր՝ հասարակական կարծիքը ցանկալի հունով տանելու համար: Ռուսաստանն իրականում նպատակ ուներ ընդլայնել իր տարածքները:

Մինչ Ղրիմի պատերազմը նման մտքեր հնչում էին նաև ռուսական հասարակությունում: Դրանք նույնպես զերծ չէին զավթողական, նվաճողական և մեծապետական գաղափարներից: Անշուշտ, կային ռուս գործիչներ, որոնք հավատում էին, թե իրենց իշխանությունների օգնության շնորհիվ սլավոն և ուղղափառ եղբայրները կազատագրվեն թուրքական ատելի լծից: Այսուհանդերձ, ռուսական կայսրության արտաքին քաղաքականության մեջ համասլավոնականությունը օգտագործվելու էր ի նպաստ սեփական քաղաքական շահերի:

Արդեն 1853 թ., իշխան Մենշիկովի՝ Թուրքիայում դիվանագիտական առաքելության ձախողումից հետո ռուս հասարակության մեջ նկատվում են օսմանյան կայսրության հետ ուժի լեզվով խոսելու տրամադրություններ: Ռուս գրող, գրաքննադատ Պ. Վյազեմսկին 1853 թ. ապրիլի 24-ին Կ. Սևերինին գրած նամակում գալիս է այն եզրահանգման, որ, եթե Անգլիան ու Ֆրանսիան հանդես են գալիս որպես Թուրքիայի դաշնակիցներ և վերջիններիս վրա ազդում են՝ առևտրական լծակներ ունենալով, ապա Ռուսաստանը, չունենալով այդ լծակները, Թուրքիայի վրա պետք է ազդի բռնի ուժով[28]: 1853 թ. հուլիսին Նիկոլայ Առաջինի հրովարտակով, որը վերջնագիր էր՝

---

[26] Նույն տեղում, էջ 687:

[27] Погодин М. П. *Вечное начало. Русский дух, М., 2011, с. 260.*

[28] *Собственноручные письма князя П. А. Вяземского К. Д. Северину (Русская старина, 1896, N 1, с. 94).*

ուղղված օսմանյան կայսրությանը, ռուսական զորքերը պետք է մուտք գործեին Դանուբյան իշխանություններ:

1853 թ. հոկտեմբերին սկսվեց Ղրիմի կամ Արևելյան պատերազմը, որը Ռուսաստանը վարում էր իբր Պաղեստինում ուղղափառ քրիստոնյաների շահերը պաշտպանելու համար:

Պահպանողական դիրքերից հանդես եկող, «պաշտոնական ժողովրդայնության» տեսության գաղափարախոս Մ. Պոգոդինը պատերազմի սկզբում հանդես էր գալիս համասլավոնականության օգտին և անգամ խստորեն քննադատում էր Նիկոլայ Առաջինին ավստրիամետ քաղաքականության համար: 1853 թ. դեկտեմբերի 7-ին Մ. Պոգոդինը, կոմսուհի Բլուդովային ուղղած նամակում, խոսելով օսմանյան տիրապետության տակ գտնվող ուղղափառ քրիստոնյաների մասին, գրում է, որ սկսված պատերազմում Ռուսաստանի իսկական դաշնակիցները նրանք են: Իսկ մյուս քրիստոնյաներին ընդհանրապես չի անդրադառնում, մինչդեռ, ռուսական կայսրությունը պատերազմը վարում էր մի քանի ճակատներով, այդ թվում՝ Կովկասյան, իսկ Ռուսաստանին սահմանակից Արևմտյան Հայաստանի բնակչությունն ամբողջովին անտեսվում էր: Պոգոդինը մասնավորապես գրում է. «Եվրոպայում մեր և՛ միակ, և՛ հուսալի, և՛ հզոր դաշնակիցները սլավոններն են, հարազատ՝ արյունով, սրտով, պատմությամբ, կրոնով, որոնք Թուրքիայում տասը միլիոն են, իսկ Ավստրիայում քսան»[29]: Եթե Ռուսաստանը չկանգնի սլավոնների կողքին, դա կանեն թշնամիները, և ճանապարհը դեպի արևելք կփակվի. «առաքելություն, որ տրված է մեր պետությանը հիմնադրման ժամանակներից»[30]:

Համասլավոնականության ներկայացուցիչ կոմսուհի Ա. Բլուդովան կարծում էր, որ քանի դեռ Կ. Պոլիսը գրավված չէ, պատերազմը պետք է շարունակվի, որպեսզի բալկանյան ժողովուրդները Թուրքիայի դեմ կազմակերպեն խռովություններ, և նրանց պետք է օգնության հասնեն ռուսական զորքերը[31]: Կոմսուհի Բլուդովան Նիկոլայ Առաջինին ներկայացնում էր որպես ազատարար ցար: Իր համասլավոնական հայացքներում նա նույնպես առաջնորդվում էր Ռուսաստանի մեծապետական շահերով: Ըստ կոմսուհու, կայսր վարած պատերազմները նվաճողական չէին, այլ՝ ազատագրական: Անկախացավ Հունաստանը, ազատագրվեց Սերբիան[32]: Խոսելով քրիստոնյա ժողովուրդների ազատագրության մասին՝ Ա. Բլուդովան նույնպես հարկ չի համարում անդրադառնալ Կովկասում ապրող քրիստոնյա ժողովուրդների ճակատագրին:

---

[29] **Погодин М. П.,** *նշվ. աշխ., էջ 263:*

[30] *Նույն տեղում, էջ 264:*

[31] **Барсуков Н. П.** *Жизнь и труды М. П. Погодина, кн. XIII, СПб., 1900, с. 81.*

[32] *Николай Первый и его время. Документы, письма, дневники, мемуары, свидетельства современников и труды историков, т. 2. Император Николай Павлович, 1850. Записка графини А. Д. Блудовой, М., 2002, с. 360.*

Ղրիմի պատերազմի ընթացքում Կովկասում ապրող ժողովուրդները անտեսվում են նաև սլավոնաֆիլ Ա. Խոմյակովի կողմից. Պարսկաստանին բռի մեջ պահելու համար նա առաջարկում է Անդրկասպյան շրջանը բնակեցնել Դոնի կազակներով[33]: Փաստորեն, այս տարածաշրջանում ապրող ժողովուրդներին չէին վստահում հասարակության որոշակի շրջաններ:

Բանաստեղծ Ֆ. Տյուտչևը, ոգևորված սլավոնաֆիլական գաղափարներով, Նիկոլայ Առաջինին կոչ էր անում գրավել Կ. Պոլիսը, դառնալ բոլոր սլավոնների ցար[34] և ստեղծել Արևելյան հունա-ռուսական մեծ կայսրություն[35]:

Ղրիմի պատերազմը մեծ ոգևորությամբ ընդունվեց նաև XIX դ. երկրորդ քառորդին ռուսական հասարակական կյանք մուտք գործած որոշ սլավոնաֆիլ գործիչների կողմից: Վերջիններս գրեթե միշտ հակադրվում էին ցարի վարած քաղաքականությանը: XIX դ. 30-40-ական թ. իջնելով քաղաքական թատերաբեմ, նրանք քննարկում էին կրոնական, փիլիսոփայական հարցեր, ինչպես նաև Ռուսաստանի զարգացման ինքնատիպ ուղին: Կարծում էին, որ ռուսական ինքնակալությունը պետք է ժողովրդին տա քաղաքացիական և քաղաքական որոշ ազատություններ: Ըստ նրանց, կառավարությունը պետք է լսեր ժողովրդի ձայնը ներկայացուցչական մարմնի՝ Զեմստվային ժողովի միջոցով: Այդ իսկ պատճառով էլ սլավոնաֆիլ-ները քննադատում էին Նիկոլայ Առաջինի՝ հասարակական կարծի- քը ճնշելու քաղաքականությունը: Սակայն սկսված պատերազմը նրանց մեջ արթնացրեց այն գաղափարը, որ բալկանյան բոլոր սլավոն և ուղղափառ ժողովուրդները պետք է միավորվեն ռուսական ցարի իշխանության ներքո: Պատերազմի սկզբում նրանք առաջին պլան էին մղում հիմնականում համասլավոնական գաղափարները: Սլավոնաֆիլ երիտասարդներից շատերը ցանկություն հայտնեցին մասնակցել պատերազմին[36]: Դեռ 1848-1849 թթ. հեղափոխությունների ժամանակ նրանք մեծ ոգևորությամբ հետևում էին Ավստրիական կայսրությունում և Թուրքիայում ապրող սլավոն ժողովուրդ-ների պայքարին: Մի կողմից, ուրախանում էին, որ իրենց ազգակից եղբայրները ոտքի էին կանգնել ազատության համար, մյուս կողմից, չէին ուզում նրանց անկախ տեսնել[37]: Առաջին հայացքից կարելի է կարծել, թե հակասություն կա իրենց իսկ առաջ քաշած գաղափարներում: Սակայն սլավոնաֆիլների երազանքն էր սլավոնական ժողովուրդներին տեսնել Ռուսաստանի կազմում և ոչ թե անկախ:

Սլավոնաֆիլները հավատում էին, որ այս պատերազմում Ռու-սաստանը կհասնի հաջողության, և ավելին, ռուսական բանակն ունի բալկանյան ժողովուրդներին ազատագրելու առաքելություն: Նրանք խոսում էին

---

[33] **Барсуков Н. П.,** *նշվ. աշխ., էջ 16:*

[34] **Аксаков И. С.** *Биография Ф. И. Тютчева (Русский архив, 1870, N 10, с. 305).*

[35] **Пигарев К.** *Жизнь и творчество Тютчева, М., 1962, с. 150.*

[36] **Аксаков И. С.** *Письма к родным 1849-1856, М., 1994, с. 248.*

[37] **Цимбаев Н. И.** *И. С. Аксаков в общественной жизни пореформенной России, М., 1978, с. 40.*

«սրբազան պատերազմի մասին»[38]: Ռուս բանաստեղծ, սլավոնաֆիլ Կ. Ս. Ակսակովն այնքան էր ոգևորված պատերազմով, որ անգամ պատերազմը սկսելու տարեթիվը համարեց խիստ խորհրդանշական և անգամ բանաստեղծություն գրեց «Ռուսական արծիվ (1453-1853)» վերնագրով, որտեղ խոսում էր երկգլխանի արծվին Բյուզանդիա վերադարձնելու մասին[39]:

Ռուսական հասարակությունում կար մի լայն շերտ, որը չէր ընդունում համասլավոնականության գաղափարախոսությունը: Դրրանք հիմնականում ռուս ազատական պատմաբան Ն. Գրանովսկու շուրջը համախմբված արևմտականներն էին և աքսորում գտնվող դեկաբրիստները, որոնք ոչ միայն չէին հավատում Ռուսաստանի հաղթանակին, այլև թերահավատորեն էին վերաբերվում ռուսական զենքի միջամտությամբ սլավոնների փրկությանը: Պ. Չաադաևի համար անհասկանալի էր այն գաղափարը, թե ինչպես պետությունը կարող է ինքն իր համար ստեղծել մի հատուկ աշխարհ, որը «կդառնա արևելյան կայսրության անմիջական և օրինական ժառանգորդը»[40]: Իսկ Գրանովսկին հռետորական հարց էր բարձրացնում. «Ինչպե՞ս ենք մենք պատրաստվել քաղաքակրթության դեմ պայքարին, որն իր բոլոր ուժերն ուղարկել է մեր դեմ»[41]: Արևմտականները ջերմ հայրենասերներ էին: Նրանք մտահոգված էին իրենց երկրի ու պետության ապագայով և ցանկանում էին, որ Ռուսաստանը պատերազմից դուրս գա փոքր կորուստներով, քանի որ ակնհայտ էր՝ Ռուսաստանը պատերազմում, մնալով միայնակ, առանց դաշնակիցների, կրելու էր խայտառակ պարտություն:

Աքսորում գտնող դեկաբրիստ Ն. Բասարգինի խոսքերով, Նիկոլայ Առաջինը Ղրիմի պատերազմին փորձեց կրոնական երանգ տալ, դրոշ բարձրացրեց հանուն ճնշված հավատակիցների՝ իր հպատակների մեջ նրանց նկատմամբ համընդհանուր կարեկցանք առաջացնելու միտումով: Սակայն ցարը չէր էլ անհանգստանում օտար երկրում ապրող իր հավատակիցների համար, որոնք ավելի քան 400 տարի հեծում էին նվաճողների լծի տակ, այն դեպքում, երբ նրանց հետ նույն հավատի, նույն ծագման տասնյակ միլիոնավոր իր քաղաքացիներ տանջվում էին ստրկական շղթաների մեջ և սպասում էին իրենց ազատագրմանը[42]:

1855 թ. ռուս իրավագետ, պատմաբան Բ. Չիչերինը «Արևելյան հարցը ռուսական տեսանկյունից» ձեռագիր պարսավագրում կտրականապես մերժում էր սլավոնաֆիլների՝ «սրբազան» պատերազմի հայեցակարգը, և ապացուցում էր, որ այս պատերազմը թուրքական սուլթանի կողմից հալածված սլավոնների ազատագրման համար չէ: «Կառավարությունը,-

---

[38] **Левин Ш. М.** *Герцен и Крымская война (Исторические записки, т. 29, М., 1949, с. 166).*

[39] **Барсуков Н. П.,** *նշվ. աշխ., էջ 41:*

[40] **Чаадаев П. Я.** *Сочинения и письма. Под. ред. М. Гершензона, т. 2, М., 1914, с. 282.*

[41] **Левандовский А. А.** *Т. Н. Грановский в русском общественном движении, М., 1989, с. 215.*

[42] **Басаргин Н. В.,** *նշվ. աշխ., էջ 247:*

գրում է Չիչերինը,- փորձում էր վստահեցնել ժողովրդին, որ նա գնում է պաշտպանելու քրիստոնեական եկեղեցին և հավատակիցներին. ուղղափառության և սլավոնական ժողովուրդների պաշտպաններն ուրախությամբ բարձրացրին այդ դրոշը և քարոզեցին մուսուլմանների դեմ խաչակրաց արշավանքը: Սակայն խաչակրաց արշավանքների դարն անցել է»[43]: Չիչերինը անկեղծորեն զարմանում է. «Մի՞թե մենք կգնանք Թուրքիայում հալածվածներին ազատագրելու, երբ մեզ մոտ ողջ հասարակարգը կառուցված է նույն սկզբունքներով»[44]: Նման կարծիք է հայտնում նաև ռուս պատմաբան Ս. Սոլովյովը[45]:

Համասլավոնականությունը ռուսական կայսրությունում նահանջ ապրեց Ղրիմի պատերազմի երկրորդ փուլում, երբ ակնհայտ էր դարձել, որ կառավարության անհեռատես քաղաքականության պատճառով, սլավոն և հավատակից եղբայրներին «փրկելու» ծրագրերը տապալվել են: Ռուս հասարակությունում առաջին պլան մղվեց երկրում բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտությունը: Համասլավոնականության գաղափարախոսությունը ռուսական հասարակությունում նոր վերելք ապրեց միայն 1860-ական թվականների կեսերին՝ կապված Բալկանյան թերակղզում ուղղափառ սլավոնների ազգային-ազատագրական պայքարի վերելքի հետ:

Այսպիսով, Ղրիմի պատերազմի սկզբնական փուլում համասլավոնականությունը ծառայեց որպես գաղափարական հենք՝ ռուսաց հասարակական-քաղաքական միտքը համախմբելու և նվաճողական նկրտումները հիմնավորելու համար:

ИДЕОЛОГИЯ ПАНСЛАВИЗМА В РОССИИ В ГОДЫ КРЫМСКОЙ ВОЙНЫ

ГРИГОРЯН Г. И.

Резюме

Идеология панславизма в России достигла своей кульминации в начале Крымской войны. Возникновение этой идеологии в Восточной Европе связано в первую очередь с национально-освободительным движением славян, находящихся под игом иностранных государств. В период правления Николая Первого панславизм являлся тем идеологическим течением, которым царь обосновывал свои политические действия как внутри страны, так и за ее пределами. Во внешнеполитическом плане панславизм служил политическим интересам Российской и мперии.

---

[43] **Чичерин Б. Н.** *Восточный вопрос с русской точки зрения. Приложения к Запискам князя С. П. Трубецкого, СПб., 1906, с. 127.*

[44] *Նույն տեղում, էջ 127:*

[45] **Тарле Е. В.,** *նշվ. աշխ., էջ 17:*